Հավելված 7
«ԳՖՆԱԵԽՊ 2 ԳՀ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

«ԳՖՆԱԵԽՊ 2 ԳՀ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳՖՆԱԵԽՊ 2 ԳՀ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ,,Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու ,,Գնումների աջակցման կենտրոն,, ՊՈԱԿ-ի ր Ձեռ միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված սննդամթերքները:

Սույն հրավերի ծածկագիրն է հանդիսանում **«ԳՖՆԱԵԽՊ 2 ԳՀ-ՇՀԱՊՁԲ-15/1»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Գյումրի, Շիրակացի 10 հասցեով, մինչև 2014թ.նոյեմբերի 26-ը, ժամը_15.00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար՝ Թամարա Երիցյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ,,Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ի շենքում, Շիրակացի 10 հասցեով, տնօրենի սենյակում, 2014թ.-ի նոյեմբերի 26-ին, ժամը 15.00-ին:

Գնման առակա է հանդիսանում ,,Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռք բերումը:

,,Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի մատակարարման /որոնք կազմված են 86 չափաբաժիններից/ տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնայինպայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ, գնային առաջարկ, Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայցնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

,,Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ի էլեկտրոնային հասցեն է՝ nansengisherotik@mail.ru :

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ փաստաթղթեր և տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև՝ կարգի 110-րդ 7/-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները.
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և տվյալներ:

Հարգանքներով Ա. Կարապետյան